ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հետազոտական ոլորտում Քոլեջի ռազմավարությունը

Քոլեջը կարևորում է հետազոտահենք կրթությունը՝ պահպանելով կրթական բարձր չափանիշները և տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող կրթություն, ինչպես նաև հնարավորություն է տալիս սովորողներին՝ լիարժեք կերպով իրականացնելու իրենց ներուժը:

Քոլեջի ռազմավարական նպատակների իրականացումը ենթադրում է իրատեսական մոտեցումների որդեգրում և արդյունավետ բարեփոխումներ՝ հաշվի առնելով հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծությունը և հետազոտահենք կրթության բարելավման կարևորությունը: Արդյունքում հնարավորություն կունենանք վեր հանել համապատասխանությունն ակնկալվող և փաստացի արդյունքների միջև և կունենանք ժամանակակից աշխատաշուկային համապատասխան, գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող, պահանջարկ ունեցող մասնագետներ:

2. Հետազոտությունների /ուսումնասիրությունների, ստեղծագործությունների, վերլուծական աշխատանքների/ ուղղությունները

Քոլեջն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ: Քոլեջի ռազմավարական ծրագրում կարևորվում է միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության և հետազոտահենք աշխատանքի երկուստեք փոխկապակցվածությունը՝ կարևորելով արդյունավետ, նորարար մոտեցումներով հետազոտությունների կատարումը և հետազոտող մասնագետների պատրաստման կարևորությունը: Հետազոտական ոլորտում Քոլեջի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարության իրականացման առանցքային ուղությունն է արդյունավետ դասավանդումը և հետազոտական գործունեությունն համատեղելու կարողության ձևավորումը, արդյունքում՝ որակյալ մասնագետի պատրաստումը:

Հավելենք, որ Քոլեջը ձեռնամուխ է եղել կատարելու հետազոտական գործունեության բենչմարքինգ (եվրոպական փորձի ուսումնասիրություն), որի արդյունքների հիման վրա կվերանայվեն տարվող քաղաքականության որոշ ուղղություններ:

3. Հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեմա

Հետազոտական աշխատանքը իրականացվում է տվյալ մոդուլի կամ առարկայի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը: Հետազոտական աշխատանքներին հատկացված ժամերը ներառված են մոդուլի կամ առարկայի տեսական և գործնական պարամունքներին հատկացված ժամերի մեջ: Հետազոտող ուսանողը կարող է ստանալ դասավանդող դասախոսի խորհրդատվությունը մոդուլի կամ առարկայի ուսումնասիրության ամբողջ ընթացքում:

Հետազոտական աշխատանքը մասնագիտական ոլորտին առնչվող, կիրառական նշանակություն ունեցող և գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային աշխատանքն է: Այն անմիջականորեն առնչվում է տվյալ մոդուլի կամ առարկայի նպատակներին և խնդիրներին:

Հետազոտական աշխատանքը կատարվում է հետազոտական ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Աշխատանքի արդյունքում ստացված տվյալները վերլուծվում են, և արվում է համապատասխան եզրակացություն:

Ուսումնական գործընթացում հետազոտական աշխատանքի կատարման ընթացքը դասախոսի հետ նախանշելիս ուսանողը աշխատանքն իրականացնում է հետևյալ բաղադրիչների հաջորդականությամբ՝

1) անվանաթերթ / տիտղոսաթերթ,
2) բովանդակություն (ցանկ),
3) ներածություն (մեթոդական դրույթներ),
4) հիմնական մաս (գլուխներ),
5) եզրակացություն(ներ),
6) օգտագործված գրականության ցանկ,
7) հավելված, եթե առկա է :

Վերջիններում պետք է արտահայտվեն հետևյալ կառուցվածքային բաղադրիչները՝

1) դրված խնդրի և հետազոտության նպատակի հստակ ներկայացում,
2) դիտարկվող հարցերի հակիրճ վերլուծություն,
3) տվյալների հավաքագրում՝ ըստ դրված խնդիրների,

4) ստացված արդյունքների (տվյալների) ներկայացում և վերլուծություն,
5) եզրակացության ներկայացում,
6) գրականության ցանկ:

Հետազոտական աշխատանքը գնահատվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների կատարման արդյունքում: Վերջինիս դեպքում գնահատումն իրականացվում է դասախոսի կողմից ընտրված գնահատման մեթոդաբանությամբ:

Հետազոտական աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

Հետազոտական աշխատանքը դասախոսին ներկայացվում է տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով՝ դասախոսի հայեցողությամբ, նրա կողմից սահմանված ժամկետում՝ մինչև մոդուլի կամ առարկայի ավարտը: Դասախոսը կարող է պահանջել նաև աշխատանքին կից ներկայացնել պրեզենտացիոն աշխատանք՝ սահիկաշարի կամ պաստառների ձևով, որի համար ուսանողը լրացուցիչ գնահատվում է:

4. Հետազոտությունների խթանմանն ուղղված քաղաքականությունը

Հետազոտական աշխատանքների և հետազոտությունների որակի և արդյունավետության բարձրացումը Քոլեջի ռազմավարական նպատակներից մեկն է: Նախատեսվում է ապահովել ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման միջոցով, ինչպես նաև բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Քոլեջի ուսումնական լաբորատոր բազան:

5. Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը

Քոլեջն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում Քոլեջի հետաքրքրությունները և հավակնությունները: Վերջիններս ներկայացված են Քոլեջի ռազմավարության գործողությունների պլանի ժամանակացույցում, որոնցից են նյութատեխնիկական բազայի բարեկարգումը և համալրումը, ուսումնամեթոդական և մանկավարժական հմտությունների կատարելագործումը, սոցիալական գործընկերության շրջանակի ընդլայնումն ու զարգացումը:

Քոլեջում պարբերաբար իրականացվում են երկարաժամկետ, միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր՝ ուղղված Քոլեջի ռազմավարական նպատակների և առաքելության իրագործմանը, որոնք կրելու են շարունակական բնույթ: Վերջիններս վերաբերվում են լսարանների, արհեստանոցների, լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությանը, գրադարանային ֆոնդի համալրմանը, նիստերի դահլիճի կահավորմանը, բուժկետի անխափան գործունեության ապահովմանը և դասախոսների մասնագիտական ունակությունների բարձրացմանը՝ հետազոտական աշխատանքների տպագրությանը, արտաքին ֆինանսավորման աղբյուրների, դրամաշնորհների ավելացմանը:

6. Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները

Քոլեջում գործում են հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:

Քոլեջում ներդրվում են հետազոտական աշխատանքները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու մեխանիզմներ՝ տեսական վերլուծությունների և էմպիրիկ հետազոտությունների հիման վրա: Քոլեջում իրականացվում են լաբորաոր փորձեր, որոնց ընթացքում տեսական գիտելիքները ամրապնդվում են փորձով, և արդյունքները գրանցվում են և օգտագործվում հետագա վերլուծությունների համար: Վերջիններս նաև իրենց տեղն են գտնում դասախոսների հետազոտական աշխատանքներում:

7. Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականությունն ու ընթացակարգերը

Գրագողությունը նեծ մարտահրավեր է և ահազանգ ակադեմիական միջավայրի ու, առաջին հերթին, գիտակրթական հաստատություններին, քանի որ այդ կերպ, մի կողմից, ոտնահարվում են հեղինակային սեփականության իրավունքներն ու գիտական էթիկան, իսկ մյուս կողմից, որպես գողության և խաբեության ձև՝ գրագողությունը ոտնահարում է անձի արժանապատվությունը և հանրային բարոյականության նորմերը:

Գրագողությունն ակադեմիական անազնվության, գիտական էթիկայի կանոնների ոտնահարման դրսևորումներից մեկն է:

Քոլեջն, ուսումնասիրելով տեղական և միջազգային փորձը, առանձնացրել է գրագողության տեսակները, որոնք ԱՐԳԵԼՎԱԾ են իրականացնել հետազոտական աշխատանքներ իրականացնելիս.

- առանց պաշտոնական թույլտվության՝ ուսանողների միջև պայմանավորվածությունը, որի արդյունքում նրանք ներկայացնում են բովանդակությամբ նույն կամ շատ նման աշխատանքներ,
- կեղծարարությունը, երբ որպես ուսումնական առաջադրանք՝ որպես սեփական մտավոր, ստեղծագործական աշխատանքի արդյունք, ներկայացվում է մեկ ուրիշի կատարած աշխատանքը՝ լինի դա հրապարակված, թե չհրապարակված, տպագիր, թե էլեկտրոնային,
- կրկնօրինակումը, երբ ուսանողը գնահատական ստանալու համար մեկից ավելի անգամ ներկայացնում է նույն կամ դրան շատ նման աշխատանքներ,
- քննությանը չթույլատրված հուշաթերթիկ կամ քննատետր ներկայացնելը,
- քննությանն այլ անձի անվան տակ ներկայանալը:

Գրագողությունն և դրա հետագա տարածման կանխարգելումը ենթադրում է մի քանի ուղություններով հետևողական քայլերի միաժամանակյա իրականացում ինչպես Քոլեջի, այնպես էլ դասախոսական կազմի և հենց իրենց՝ ուսանողների կողմից: Քոլեջում մշակվել են կանխարգելման մի քանի քայլեր՝

- ուսանողը պետք է տեղյակ լինի հետազոտական աշխատանքներ իրականացնելու քայլերի մասին,
- դասախոսական կազմը հետևողական և պատրաստակամ պետք է լինի, մի կողմից՝ ուսանողներին վերոնշված վարքականոնի և ընդհանուր դրույթները ներկայացնելու, բացատրելու, մյուս կողմից՝ դրանց խախտումները կանխելու գործում,
- դասախոսները պետք է օգնեն ուսանողին ճիշտ պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացումը, ինչպես նաև նպաստեն ուսանողի մոտ քննադատական և ինքնուրույն մտածողության զարգացմանը,
- դասխոսները պետք է հանգամանորեն ծանոթանան ուսանողների պատրաստած աշխատանքներին՝ ուսանողին բացատրելով նրա կատարած

սխալներն ու աշխատանքի թերությունները, և, ըստ էության, լինելով այլ աշխատանքի ոչ պաշտոնական գրախոս-քննադատը, և, միաժամանակ, կանխելով գրագողության ցանկացած փորձ՝ լինի դիտավորյալ, թե ոչ դիտավորյալ,

- պարբերաբար պետք է փոփոխվեն ուսումնական առաջադրանքներն ու աշխատանքների թեմաները՝ միաժամանակ խրախուսելով հետազոտական աշխատանքներում ինքնուրույն «դաշտային» հետազոտությունների կազմակերպումը,
- հետազոտական աշխատանքների վրա իրենց՝ որպես հետազոտության ղեկավարի / պատասխանատուի անունների առկայությունը ընկալեն որպես լրացուցիչ պատասխանատվություն այդ աշխատանքի որակի համար,
- իրենց հերթին ուսանողները պետք է պարբերաբար խորհրդակցեն հետազոտության ղեկավարի կամ դասախոսի հետ, եթե հետազոտական աշխատանքի հետ կապված ինչ-որ հարցում ունեն, կասկածներ կամ անվստահություն (օրինակ՝ կարելի՞ է արդյոք այս աղբյուրին հղում կատարել, ճի՞շտ է արդյոք հասկացել կարդացածի միտքը, ճի՞շտ է արդյոք ձևակերպել ու հիմնավորել սեփական միտքը և այլն):

8. Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը

Քոլեջը խրախուսում է իր աշխատակիցներին՝ իրականացնելու հետազոտական աշխատանքներ, որի վերջնարդյունքը տպագրված գիտական հոդվածներն են, ինչպես նաև՝ դասախոսների ստացած գիտական կոչումները:

Քոլեջում կան նաև ուսանող-դասախոսներ, ովքեր դասավանդելուն զուգահեռ սովորում են ՀՀ պետական ու մասնավոր բուհերում, ինչը խրախուսվում է Քոլեջի կողմից՝ վերջիններիս ներգրավելով տարատեսակ միջոցառումներում՝ վերապատրաստումներ, արտասահմանյան այցեր և այլն, որի ընթացքում ստանում են ամբողջական ֆինանսավորում:

Նախատեսվում է ներդնել նաև ուսանող-դասախոս համագործակցությունը՝ գիտական հոդվածներ գրելիս ուսանողների ներգրավվածությունը մեծացնելու համար:

Այն դասախոսները, ովքեր կներգրավեն ուսանողներին իրենց գիտահետազոտական աշխատանքներում, Քոլեջի կողմից կարժանանան խրախուսական պարգևների:

9. Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավման քաղաքականությունը

Քոլեջում կարևորվում է հետազոտությունների իրականացման երկակի խթանման քաղաքականությունը՝ դասախոսների և ուսանողների համար: Այս առումով նախատեսվում են իրականացնել արդեն իսկ առկա մեխանիզմների բարելավում և նորերի ներդրում:

Նախատեսվում է տրամադրել անվանական կրթաթոշակներ այն ուսանողներին, ովքեր կցուցաբերեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու նախաձեռնողականություն և կապահովեն բարձր արդյունքներ: Ինչպես նաև Քոլեջում կներդրվի զեղչային քաղաքականություն՝ վճարովի համակարգում սովորող այն ուսանողների համար, ովքեր իրենց լավագույնս կդրսևորեն հետազոտական աշխատանքներ իրականացնելիս:

Քոլեջում արդեն իսկ գործում է խրախուսման համակարգ, որը ներառված է Քոլեջի ներքին կարգապահական կանոնների մեջ: Նախատեսվում է ինտեսիվացնել վերջինս՝ ներգրավելով առավել մեծ քանակով ուսանողների:

Պլանավորվում է նաև համագործակցությունների ապահովման միջոցով իրականացնել միջազգային համագործակցություններ՝ ուսանողների փոխանակման ծրագրեր, վերապատրաստումներ և պրակտիկաներ, որոնց ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

10.Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները

Քոլեջում կարևորվում է ուսանողների ստացած ոչ միայն տեսական, այլև պրակտիկ գիտելիքները, որի նպատակով ուսանողները իրականացնում են լաբորատոր կամ դաշտային հետազոտություններ՝ կախված մասնագիտության առանձնահատկություններից: Մասնավորապես՝ ուսանողները լաբորատոր փորձեր են

կատարում Քոլեջի լաբորատորիաներում, գիտահետազոտական տարբեր ինստիտուտներում, ունենում են այցեր քաղաքային և մարզային գործընկեր կազմակերպություններ, որտեղ էլ դաշտային հետազոտություններ են իրականացնում:

Քոլեջը կարևորում է հետազոտական գործունեության ընդլայնումը, ինչպես նաև միջազգայնացումը: Գիտական գործունեությունը լուսաբանվում է Քոլեջի պաշտոնական ֆեյսբուքյան էջում: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին բաժանորդագրվել և ստանալ տեղեկատվություն՝ Քոլեջի հետ կապված տեղական և միջազգային իրադարձությունների մասին, ինչպես նաև աշխատանքային հնարավորությունների և տարբեր մասնագիտություններում առկա նորույթների մասին:

Քոլեջն իր գործունեության ընթացքում իրականացրել է մի շարք հետազոտական աշխատանքներ, փոխանակման ծրագրեր, կազմակերպել է աշխատաժողովներ, հրավիրել առաջավոր դասախոսների՝ տարբեր բուհերից և ոլորտի մասնագետներ՝ ձեռնարկություններից, ովքեր իրենց գիտելիքներով և փորձով հաղորդակցվել են ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական անձնակազմի հետ:

Նախատեսվում է նաև իրականացնել տարբեր սեմինարներ, աշխատաժողովներ ու հանդիպումներ՝ գիտահետազոտական ունակությունների բարձրացմանն ուղղված, որի մեջ ներգրավված են լինելու ուսանողները՝ ուսանողական խորհրդի անմիջական մասնակցությամբ: